


ՏԱՐՈՐԻՆԱԿ ՀԱՒԱՔԱՄՈՒՈՒԹԻՒՆՔ



Սարա թագուհւոյն ժամանակէն ի վեր հաւաքածոյի մուգութիւնն, կը գրէ Գլիվ Հոլանտ՝ «Չեմպլար ժուրնալ» ի մէջ, սովորական էր. իսկ մեր օրերը շատ աւելի տարածուած է:

Ամէն հաւաքածոյէ աւելի դրոշմաթուղթերուն հրահանգիչ և շահաւորագոյններէն մին է, վասն զի ասոնց արժէքը երթալով կը բարձրանայ ըստ իրենց հնութեան: Քսան, երեսուն տարիներ առաջ կատարուած հաւաքածոներն՝ այսօր իրենց սկզբնական արժէքին քսապատիկն և հնգապատիկն ունին. և մինչև իսկ կայ հաւաքածոյ մը՝ որուն երեսունհինգ տարի վերջը տասնապատիկ գինը բարձրացած է:

Նոյնը կը պատահի նաև. հին գրքերու, տպագրեալ պատկերներու և յախճապակիներու մասին. բաւ է թէ ընտրութեամբ եղած ըլլայ ժողովածոն, սակաւագիտեալուն մասնաւորապէս խնամք տանելով:

Վերջերս Սվերի անօթ մը աճուրդով 250 սղէրլինի ծախուեցաւ. մինչդեռ նոյնը 20 տարի առաջ դարձեալ աճուրդով՝ այդ գումարին քառորդովը վաճառուած էր: Գիտենք որ ինչ ինչ գրքեր առասպելական գիներու՝ հասած են՝ կամ սակաւագիտ և կամ սպառած ըլլալուն համար:

ՊԱՆԻՈԿՆԵՐՈՒ ՊԻՏԱԿՆԵՐ (étiquette). — Մարդիկ՝ որոնց չի պակսիր ժամանակ և դրամ՝ ետէ՛ կ'ըլլան հաւաքման ամենէն նորօրինակ իրերու: Այս արտաոտոցներէն մին, զոր ուստերս ասիթ ունեցայ տեսնելու, կ'ըսէ հեղինակը, բազմահատոր հաւաքածոյ մ'է պանդոկի պիտակներու, որը սովորաբար ճամբորդներու պայուսակներու վրայ կը փակցուին իրենց մեկնելու ժամուն: Այս գունագեղ թղթի կտորներն, երեք հազարէ աւելի, որոնք ելթալով կ'աւելնան, հետաքրքրական ուսումնասիրութիւն մը կ'ընծայեն նկարներու և գոյներու: Եւրոպայի վերաբերեալ հատորը շատ այլազան պիտակներ կը պարունակէ, սկսեալ Լոնտայի Գարլըդոն պանդոկէն

մինչև Սիկիլիոյ փոքրիկ գինետուն մը. Բարլզու Պրեսդոլէն մինչև Սեա Սնտաֆի (Գերմանիա) ստորին իջևանի մը կարմիր և դեղնագոյն այլանշաղ պիտակը:

Գահրէի ճէզիրէ բալաս պանդոկին պիտակը հակապատկեր մ'է Խրիմու խեղճուկ օթեանի մ'ունեցածին. մինչդեռ Անտալուսիայի գինետան մը նշանակն իր դէմն ունի Վիեննական մէկ ծանօթ Պանդուկէնը՝ դեղին և սև գոյներով: Կովկասէն մինչև Պիտրենեանները, Հիւսիսայ Գլուխէն (Cap Nord) ցփահրէ շատ մը ինքնատիպ պիտակներ կը պարունակէ այս հաւաքածոն: Ասոնցմէ քանիները ուղղակի պայուսակներուն վրայ փակցուեցան հետամուտ ճանապարհորդին. մաս մ'ալ ինքը գնեց: Ասիոյ մէջ կը ներկայանան հնդկական, չինական և ճաթոնական պիտակներ: Ափրիկէի մէջ կը տեսնուին Գարի զանազան ցեղերունը. յետոյ թէ՛ Հիւսիս. և թէ՛ Հարաւ. Ամերիկա մեծ տեղ կը գրաւեն: Այս վերջին հատորիս առաջնորդութեամբ ճանապարհորդը կը շրջի Նիւ-Խորքէն մինչև Սան Ֆրանչիսքոյ, զանազան արշաւաններով դէպ ի հիւսիս և հարաւ, այն երկիրները՝ ուր անիկա քանի մ'ամիս անցուց կովորդիտի որսորդութեամբ:

Հաւաքողը քանի մը հարիւր սղէրլին ծախած է իր ժողովածոյին համար. և համոզուած է թէ գժուարաւ մէկը պիտի գտնուի որ անոր արժէքովը գնէ. բաւական է թէ անիկա ալ նոյն օրինակ հաւաքածոներու տենչ մը չունենայ:

Չարալեզուներ կ'ըսեն, թէ ճանապարհորդը ոտներ իրենց պայուսակներուն վրայ պիտակներ կը փակցրնեն պանդոկներու և երկիրներու՝ ուր երբեք զննցած չեն:

ԱՊՈԽՆԵՐ. — Հետաքրքրական են, թէ և ոչ միշտ վաւերական, հաւաքումները նշանաւոր անձերու ակումներուն, ինչպէս է զաղդիացիի մը հաւաքածոն՝ որ յարաբերութեան մէջ և աշխարհիս գլխաւոր տառաւորութեան հետ և Ասոր մէջ կը գտնուին ակումներ Նարուէն Ա.ի Յուլիոս կեսարու, Վիկտոր Հիւկոյի, Ուէլլինգտոն

գըսին, Լուի Նաբուլէոնի, Թիէրի, Պիզ-մարբի, Եւրոպական արքունեաց զանազան անձերու, Լաֆայէթի և Գէրգը Ուոշինկո-նի:

Լաֆայէթի ական հաւաքողին քանի մը հարիւր ֆրանք արժեց, Պիզմարբինը քիչ մը պակաս, ընդհակառակն վիկտոր Հիւկոյինը արժեց միայն 50 շէլին:

ԳԵՐԵՁՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ. — Ուր-քան տխրական և ինքնատիպ է զարձեալ՝ Գաղղիացւոյ մը մոլեխոն տենչանքը, տա-պանաբարբի և գերեզմանական զարդեր ժողովելու: Անոր պարտէզին մէջ, Բարիզի շրջակայքը, անկիւն մը, անտառակ մը կայ որ կարծես գերեզմանատուն կը նմա-նի. Գաղղիոյ մէջ գերեզմաններն, կարճ շրջանէ մը վերջը, փոփոխութեանց են-թակայ ըլլալով՝ յիշեալ անձին հաւաքա-ծոն անճեցնելու կը ծառայեն:

Նա իր յարկարածոյին զանազան սե-նեակներուն մէջ ունի շատ մը պղնձի կտորներ՝ գերեզմանական քարերու հետ գնուած: Թէպէտ այս տեսակ հաւաքածոյ մը վտանգ կ'ընծայէ որ շատեր քաջա-լիրօին՝ գողնալու գերեզմանաց զարդա-րանքը, անտարակոյս այս պարոնինը շատ մը հետաքրքրական յիշատակարաններ կը պարունակէ անցեակէն, որոնք ցմիշտ պի-տի կրօնուէին:

Նշանաւոր է, ի մէջ այլոց, պղնձէ կա-փարիչ մը, որ կը ներկայացնէ միջնա-դարեան ասպետ մը իր կնոջ հետ, որոնք ժամանակաւ Նորմանտիայի եկեղեցւոյ մը մէջ թաղուած էին: Այդ խնամքով պա-հուած տապանին վրայ յիշատակեալ կան նաև, միջնադարեան Գաղղիա-Նորման-Լատինախառն լեզուով, վախճանեալ աս-պետին քաջագործութիւնները:

ԳՐԻՉՆԵՐ. — Հետաքրքրական է ամե-րիկացի տիկնոջ մը հաւաքածոն՝ երեւի անձանց կամ նշանաւոր առիթներու մէջ գործածուած գրիչներու: Անշուշտ այդ հարուստ տիկինը մեծ զուճար մը պիտի տար այն զրչին, որով ստորագրուեցաւ վերսայի՛ր դաշնագիրը:

Այդ ժողովածուն կը պարունակէ գրիչ-

ներն՝ Նէլսոնի (գորշագոյն փետուր մը սագի՝ ծայրը բաւական մաշած), Ուէլինկ-դոնի, Բալմէրստոնի, Վիկտոր Հիւկոյի (ի կէրնէ գործածածն, որով գրեց Les tra-vaillleurs de la mer. կ'ըսեն թէ Նա-բուլէոն Գ. այս գրիչներէն մին գործածած է՝ ի Սէտան անձնատուութեան հրահանգները գրելու: Ուրիշ մը ծառայեց Վիկտորիա Թագուհւոյն՝ Օզպորն իսքին մէջ, կան ուրիշներ զորս կը գործածէին կամ ունէին՝ Եւգենի իշխանուհին, Արքայաժմ Լիւզոյն, Ռուզվէլէ նախագահը, Հ. Սդանլէյ, Լի-վինսդոն, Կորտոն զօրավարը, Կարոլոս Տիքէնս, Լորտ Լէյդոն, Բրտեարտ Քի-րլինկ, Գէննիսոն, Էմիլ Զուլա, Պալզաք, ժերոմ և Մէսոնիէ՝ գաղղիացի երեւի նկարիչները, և ղեռ ուրիշ շատեր:

Ասոնցմէ շատերը դրամով առնուած են: Բալմէրստոնինը 25 տոլլար արժեց հաւա-քողին, Ուէլսոնինը շատ աւելի. մինչդեռ Գէննիսոնինը 10 շէլին, իսկ Ռուզվէլէինը՝ գրեթէ կէս տոլլար:

Հաւաքածոյին աւելի հետաքրքրական գրիչներէն մին է այն՝ որով Պերլինի դաշ-նագիրը ստորագրուեցաւ յամին 1878: Շատ մը նշանաւոր անձինք՝ հաւաքողին խնդրանքին վրայ իրենց գրիչները ձրի նուիրեցին: Հանդերձ հաւատարմով տիկնոջ՝ ժողուած գրիչներու ոմանց վաւերակա-նութեան մասին, որոնք հնութիւններու խանութներէ գնուած են, ներելի է մինչև մէկ աստիճան հաւատալ անոր յայտարա-րութիւններուն:

ՅԱՅՏԱԳԻՐԳ ԹԱՍՏՐՈՆԻ. — Հետաքրք-րական է հաւաքածոյ մը յայտագիրներու՝ երեւի արուեստագիտաց կողմանէ ներ-կայացուած թատերախաղերու: Անոր մէջ կը յիշուին Դաւիթ Կարբիք, Էտմոնտ Քիշ, Մագրիտի և Սիտոտն: Արդի գերասան-ներու մէջ կը գտնենք ծանուցումներ հե-տեւեալ անուններով. Քիշնաւ, Իրվինկ, Էլէն Գէրրի, Պերպոնմ Դրի, Գէորգ Ա-լէքսանտր և այլք. իսկ Անգղիայէ զուրս Սառա Պէրնար, Էլէոնորա Տուզէ և եր-կու Գորէշններ:

Այս յայտագիրներէն ոմանք՝ անոնց

պատկանեալ ներկայացմանց օրերուն թէ՛ պէտեւ քիչ կամ ոչինչ կ'արժէին, սակայն հնազոյններէն ոմանք մեծ արժէք ստացան: Ասոնցմէ մին, Սիտտոնսի ներկայացման վերաբերեալ, աւելի քան 5 սդէլլինի ծախուեցաւ, իսկ կարրիքինը շատ աւելի սուղ ծախուեցաւ: Ամբողջ հաւաքածոն խնամքով պլոյոմի մը մէջ ամփոփուած՝ 600 սդէլլինի գնահատուած է. և հաւանօրէն եթէ ի վաճառ հանուի՝ գինը աւելի պիտի բարձրանայ:

ԿՕՇԻԿՆԵՐ. — Կանայք մասնաւոր հաճոյք մը կը զգան երեւելի անձանց զործածած զգեստներն ու զարդարանքն ունենալ: Նիւ Եորքի կանանց ծանօթ ընկերութիւն մը՝ կօշիկներու սակաւագիւտ հաւաքումը մ'ունի, որոնցմէ ոմանք ճշմարիտ գլուխ գործոց մ'են կօշկակարութեան արուեստի: Մասնաւորապէս հետաքրքրական և թանկագին է զոյգ մը, սպիտակ մետաքսեայ, ոսկեթել շուշանազարդ բանուած, որ Մարի Անգուանէդի կը վերաբերէր: Զոյգ մը սև մետաքսեայ փոքրիկ կօշիկներ, չափազանց բարձր կրունկներով, ոչ նուազ դժբախտ Լամպալ իշխանուհոյն կը վերաբերէին:

Այս հաւաքածոյիս միւս նմոշներուն մէջ, որ ընդ ամէնը 400 հատ են, կը նշմարուի Ռուսիոյ վերջին ձարուհւոյնը, որ յատկապէս Բարիզ շինուած է, սպիտակ մորթէ այծեամի, ոսկիէ նուրբ բանուածներով, և ուրիշ մեծկակ զոյգ մը, բարձր կրունկով, զոր կը գործածէր Տրակա՝ տարաբախտ թագուհին Սերպիոյ: Իօշիկ մը՝ շագանակագոյն կաշիէ, ցած կրունկով՝ ազդ մը կը կրէ, ըստ որում ան Շարլոզ Գորտէյի գործածածն էր. և թերեւ անոնցմով օրիորդն Գաէնէ Բարիզ գնաց՝ դաշունահար ընելու զՄարա:

Դարձեալ կը գտնուին այս հաւաքածոյին մէջ զոյգ մը մետաքսեայ ամենափոքրիկ մուճակներ Անգղիոյ արդի թագուհոյն մանկութեան հասակէն: Զափաւորապէս մեծկակ է Սպանիոյ իզապէլլա թագուհոյնը. մինչդեռ Իտալիոյ թագուհւոյնը վայելչապէս գեղեցիկ է Դալիոնիի

կօշիկն, սպիտակ մետաքսէ, հաւաքածոյին ամենէն մաշածներէն մին է. պատճառը՝ նշանաւոր պարուհւոյն յաղթանակներուն շատ մասնակցած ըլլալուն համար:

Այս հաւաքածոն 10,000 տոլլարէ աւելի արժէք ունի: Մարի Անգուանէդի կօշիկը քսան տարիներ առաջ երեսունուհինգէն քառասուն սդէլլին արժած է: Շարլոզ Գորտէյններն՝ իւր տեսակներուն մէջ հետաքրքրականներէն մին է, վաւերականութիւնը ստուգուած ըլլալուն համար:

ԱՅԱՍԱՅԱՆ ԶԳԵՍՏԵՂԵՆՔ. — Ուրիշ տիկին մը, նմանապէս ամերիկուհի, շատ տեսակ հագուստներ կը հաւաքէ: Իր անձնական թանգարանը կը պարունակէ այրերու և կիներու զգեստներ, պախճաւանդներ (corset), սանտրներ և ուրիշ առարկաներ՝ պատմական և արհեստական տեսակետով նշանաւորը:

Գեղեցիկ է նոյնպէս տիկնոջ մը հաւաքածոն զլիսոյ զարդերու՝ զանազան երկիրներու: Ասոր մէջ կան ճարտնացի կանանց զլիսոյ զարդասեղներ՝ տեսակ տեսակ ազնիւ քարէ գնդակներով. շանձկան ակոսներէ զարդարանք կանանց՝ իսլանտական ցեղի մը. անարուեստ գնդասեղներ զլիսոյ, փոքրիկ շամփուրներու նման, Զուլուններու, Պազուդոսներու և ուրիշ ասիական ցեղերու: Բարձր սանտրներ կրիայէ Սպանիոյ և Մարոքի կանանց, արծաթեայ գունդով և ինքնատիպ ձևերով զլիսասեղներ Նորուեկիոյ և Պրիդանիոյ կանանց. եգիպտական գերեզմաններէ հանուած փայտէ սանտրներ և պղնձի կեռասեղներ՝ որոնք նախկին Հռովմայեցոց ժամանակին կը վերաբերէին:

Այս հաւաքումը շատ շահեկան է թէ՛ պատմական և թէ՛ արուեստական մասամբ:

*

ԲՐՈՆԱԿԱՆՆԵՐՈՆ վայել յուշարժան — Եղորդըս կըրած ու թողած ըլլեման:

ՊԱՅՐԸՆ

(Շիլլերի Կայանատար)